

վննետկեան զինուց ձախորդութիւնքն Մարինիանդի անուանի պատերազմին մէջ յաղթանակեցին (1515) . որով Նոյոնի դաշնադրութեամբ վննետիկ դարձեալ ստացաւ իր ամբողջ ցամաք երկրի մասը (1516) : Քաղաք մը , որ Եւրոպայի յաղթեր էր , կ'ըսէ Սիլմոն . տի , կրնար անմահ համարուիլ , բայց հսկայական պատերազմին համար ըրած զոհերն անոր ոյժը սպառեր էին : Վննետիկ իր գաւառները ստացաւ . բայց ասկէ վերջը ստիպուեցաւ իր ամենայն ճիգնը թափելու , ըստ անկեղծ պատմագիրի մը բանից , որպէս զի օտարաց հետապօտ և նախանձորդ աչքէն իր անբուժելի վէրքերը ծածկէ :

Եւս առաւել որ հաստատեալ խաղաղութիւնն երկար չտևեց . և իտալիոյ խռովութիւններն և ՚ի թուրքաց վախն կը ստիպէին զտկարացեալն վննետիկ անդադար գէն ՚ի ձեռին կննալու . Հռոդոսի անկումն յայտնի սպառնալիք էր վննետիկեաց վաճառականութեան և իւր ստացուածոցն յՍրեւել . և հասարակապետութիւնն մեծ ջանքով կը նա . յէր Սիւլէյմանի բարձրութիւնը զըրգող պատճառները հեռացընելու : Սակայն միւս կողմանէ իր պատին ալ զխանայով կայսրութեան դէմ թուրքաց իրեն նուիրած դաշնակցութիւնը մերժեց , և քաջութեամբ պաշտպանեց զԳորֆու խայրէտտինի զինուց գէմ , որ դարձեալ զօրացաւ Արշիպեղագոսի քա .

նի մը կղզեաց տիրելով (1537) : Այն ատեն վննետիկ Պօղոս Գէ և Կարողոս Ե՛ հետ միաբանելով (1538) դարձեալ , ստուգեց որ ինքն իր վրայ միայն պէտք էր վստահիլ . և հետեալ դաշնադրութեամբ թուրքաց թողուց զնէապօլիս Ռոմանիոյ և զՄալուադիս (1540) : Ան կէ յաջող չեղաւ յետոյ փիլիպպոս Բէ և Պիոս Ե՛ հետ ըրած դաշնակցութիւնն ալ . վասն զի Կիպրոս օգնութիւն չունեցաւ , թէպէտ և Պրակատինոյ նա . հատակն զայն ցլերջին չունէ քաջութեամբ պաշտպանեց (1571) . և փիլիպպոս Բէ փառասիրութիւնն թէ և չկըրցաւ զԼեբանդոյի յաղթութիւնն արգելու , սակայն գրեթէ անօգուտ ըրաւ զայն (1571) , եւ այսպէս հասարակապետութիւնն տեսնելով ՚ի փորձոյ՝ որ դաշնակիցք ոչ վտանգի ժամանակ իրեն կ'օգնէին և ոչ յաղթութեանցը կը հետևէին , առանձին կնքեց զխաղաղութիւն (1573) . որուն վրայ յանդիմանութիւն կրեց . բայց Կիպրոսի կորուստն , որ կրնար արգիլուիլ , կ'արդարացընէր զհասարակապետութիւնն : Վերջապէս վննետիկ միայն ինք զինքը հռալով ապագային մէջ , ամենևին Սուստրիացուց նախանձէն չվախցաւ , երբ Բայմանովայի բերդը կանգնեց , պաշտպանելու համար զՊրիուլի ՚ի թուրքաց , որը կրկին անգամ անոր վրայ ասպա տակեր էին (1593) :

Կը շարունակուի :

ԽՕՍՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆՔ ՏԵՐԵՆՏԻՈՍ ՄՍԽԻԱՆԻ ԻՏԱԼԱՅԻՌՈՅ

Տերենտիո Մամիանի Իտալացի քաջ գրական և փիլիսոփայ հայրենասէր անձն , իր հայրենակիցներէն մեծ խնջոյքի մը հրահրուած ըլլալով ՚ի Բեզարոյ , և շատ զովեսանէր ըսելով այն տեղ յաստիճանաւոր անգամ անձանց և յայլոց , սիրտը ելած այն համառօտ խօսքերը կ'ուղղէ առ քաղաքակիցս իւր : Տեսնելով իր խօսից մէջ դաշնադրան լուսամբտ իմաստներ՝ որք ՚ի դէպ են և յարմար ոչ միայն Իտալացուոց՝ այլ և հասարակաց , ինչպէս ինքն ալ կ'ըսէ , պատշաճ դատեցանք հրատարակելու Բազմամիպիս մէջ Թարգմանելով :

Սիրելի հայրենակիցք իմ .

Պ . Քաղաքագլխին առ իս ուղղեալ մեծամեծ և սիրոյ խօսքերը կը պսակենն այսօր այն չքեղ ընդունելութիւններն և եղական պատիւները՝ զորս առ իս զերլու չէք ձանձրանար : Սակայն մինչդեռ ձեր այս ցոյցերն՝ սրաի ազնիւ և վնհանձն զգացումներէն կը ծագին , յայտնապէս անհամեմատ են իմ տկար

անձին՝ որ չափաւոր է ըստ ամենայնի, երբեմն կ'ուզեմ խաբել զիս, պարունայք. այլ խղճմտանքն այնպէս պայծառ, այնպէս զօրաւոր և իշխանաբար կը խօսի՝ որ բնաւ որ և է արտաքին ձայն չի կրնար հանգրտեցընել զանկայ :

Ասիկայ ըսել չէ՝ թէ պարտական չեմ խորին և անվերջ շնորհակալութիւնս մատուցանելու ձեզի : Սրտէս բնական կու գայ փոխադարձ բոլոր ինք զինքս նուիրելու ձեզի, բոլոր իմ կարողութիւնս, բոլոր բովանդակ էութիւնս. բայց կ'ամբընամ ոյս ողորմելի և անօգուտ ընծայիս վրայ : Ամաց ծանրութեան տակ ոչ մի զօրութիւն մտաց անսպառ չի մնար, և ինձի կը մնայ միայն կրցածիս չափ լաւագոյն պատրաստել իմ մերձաւոր վախճանիս, կըրկնելով բանաստեղծին հետ, որ՝

« Եթէ կեննէ 'ի զուր անցաւ
Գոնէ բաժանումը գովելի ըլլայ » : ...

Այլ ձեր ուրախակցութիւնն, ով տեարք իմ, որուն մասնակից է նաև ժողովուրդն, և հաղորդակից բոլոր բովանդակ Գաւառն, բարձր նշանակութիւն մը կը պարունակէ, և ներեցէք ինձ որ համառօտիւ բացատրեմ :

Նախ և առաջ գովելով, ժափահարելով ծերունի և հաստատուն հայրենասէր մը, ուզեց յայտնի ընել որ թէպէտ այս ազատութեան տարիներուս մէջ շատ սխալմունք եղան, շատ խոստմունք ետ մնացին, և տակաւին զօրծն և ոչ կիսով չափ մեր վերածննդեան նախադադափարին կը համապատասխանէ, սակայն զուր չէք ուզեր այսու ետ դառնալ, և ոչ կրկին ողբալ անցեալ մը՝ որ լի է ծաւալութեամբ, նուաստութեամբ, հարստահարութեամբ և կեղծաւորութեամբ : Մենք ամեն չարեաց մէջ կը մխիթարուինք մտածելով թէ իտալիա կայ, և իտալիա պիտոր մնայ յաւիտեան :

Բաց ասկէ, չկայ կարծեմ այս սեղանին վրայ այնպիսի մէկն՝ որուն սըրտին մէջ չըլլայ այն գեղեցիկ յոյսը՝

թէ իտալիա ազատ և մէկ, հուսկ ուրեմն պիտի սկսի իր երրորդ և ճառագայթարձակ վերականգնումը :

Բայց ինչ կերպ պիտի ըլլայ, կամ կըրնայ ըլլալ, այս ներելի է հարցընել : Վասն զի պէտք չէ մոռնալ, սիրելի քաղաքակիցք իմ, թէ մենք շատ ուշ կը հասնինք առաջին տեղը բռնելու յարեմուտս յառաջացեալ ազգաց մէջ, և թէ քաղաքական և ընկերական կենաց կացութեան փառքն և բարձրագոյն պատիւներն արդէն գրաւուած են. և թէ արդի ունոյք չեն այնպիսի ազգեր որ թողուն ձեռքերնէն յափշտակուելու զայն :

Ով կը վստահի, օրինակի համար, հաւասարելու Անգղիոյ նաւատորմին, հարստութեանց, վաճառականութեանց և գաղթականութեանց. ով կը համարձակի մօտենալու Գերմանական նոր զօրութեան զինուոց ուժոյն. կամ հաւասարիլ պայծառութեան և միշտ կանգուն և ոչ երբեք ընկճելի յանդգնութեան Գաղղիացուց :

Թողունք յիշել մեր էութենէն շատ հեռու ուրիշ տեսակ առաւելութիւններ և մեծութիւններ, ինչպէս է ընդարձակող և աշխարհակալ զօրութիւնն Ռուսիոյ, և Միացեալ Նահանգաց զօրծոն և անխոնջ հոգին :

Բայց, փառք Աստուծոյ, կայ մէկ փառաւոր ասպարէզ մը, որ որ և իցէ մեծ կամ փոքր, քիչ կամ շատ կարող ազգի արդեւեալ չէ, և են յաղթութիւն մտաց, աշխարհակալութիւն արհեստից, գիտութեանց, քաղաքականութեանց :

Ես արդ առ այս երկու ամենայամար օրինակ մէջ կը բերեմ, մէկն հին և մեր, միւսն նոր և օտար : Յիշեցէք վեշտասաներորդ դարը, երբ իտալիա այրեցաւ, գանահարեցաւ, պատառ պատառ եղաւ ամեն տեսակ օտարազգիներէ, Գաղղիացիներէն, Սլաւոնացիներէն, Գերմանացիներէն և երբեմն մինչև Տաճկներէն և բարբարիկներէն : Բայց որովհետև արհեստի, գիտութեան և ամեն տեսակ գրականութեան և քաղաքականութեան արտաքին կերպին մէջ ոչ ոք մեզի կը յաղթէր, նոյն իսկ 'ի

մեզ ասպատակողքն և աւարսուռք մեր, լի զարմացմամբ և մեծամեծար յարգութեամբ կ'ապշէին վրանիս. « Յու՛նաւտանս սխարտեալ, զյաղարականն կարաւ ։

Իբրեւ նոր օրինակ՝ Զուիցերլին մէջ բերեմ. պզտի երկիր և կազմեալ յայլ և այլ կրօնից, լեզուաց, ազգերէ և սո՛ւ վրոսթիւններէ ։ Բայց որովհետեւ քան զոր յետամնաց չէ քաղաքական յառաջագիմութեան մէջ, և երբեմն նաև վարժապետ կ'ըլլայ իրեն մօտակայ երկիրներուն, ուստի ամենքը կը պատուեն զինքը և կը սիրեն և անկեղծաբար կը զարմանան ։ Եւ այն փոքրիկ ձիւնեւորան՝ որ հազիւ տեսանելի կէտ մ'է Եւրոպիոյ մեծ գնախն վրայ, ամեն կրթեալք կը ճանչնան կատարելապէս և կը պատուեն, յիշելով Ռուսոյի, Սոսիւրի, Պոննելի, Սիսմոնտիի, Տըլա Ռիվի, Տը Գանտոլի պանծալի անունները ։

Ահաւասիկ փայլուն բոյլքն՝ որ այն անտեսանելի կէտէն կենդանի լոյս կը սփռեն ընդ բոլոր երկիրս՝ մտաց մէջ ։

Արդ ինչ պէտք չէ ընենք մենք, տասն անգամ աւելի մեծ երկիր ունողքս քան զՀելլոստական հասարակապետութիւն, մենք՝ միշտ զերծ աշտահետեւ ամեն օտար լծէ, մենք ունողքս այն միութեան՝ որ մեր անթիւ սերնդոց անձկալի և միշտ անարդիւն փափազն եղաւ Տեարք, կ'ըսեն բնագէտք՝ թէ բոլոր Եւրոպա սկըսած է որդան պէս փակիլ 'ի մէջ անձկութեան և ցաւոց, կը սպասէ՝ ոչ առանց մեծ երկիւղի, քանի մը ընկերական խնդրոց լուծման, որոնց հետ հարկաւ յարակից է բարոյական և կրօնական խնդիրն ալ ըստ այսմ, կարծէք արդեօք, ո՞վ սիրելի հայրենակիցք իմ, թէ պարզ դիպուածով կամ բաղդին օգնութեամբ եղաւ որ իտալիա կանգնի ճիշդ այս գաւառս վերջերն, առաջիկայ գոնուելով երկիւղալի և ստիպողական խնդիրներու ընդհակառակն՝ չէք կարծեր ինձի հետ միաբան, թէ զամենայն նախակարգող

միտքն՝ դիտմամբ պահած էր այս առանձնաշնորհեալ ազգը, որ երկու անգամ կըցաւ ընկերական կենակցութեան չփոթեալ կարգը կանոնաւորել ։

Մի՛ նայիք թէ մենք հօս պզտի մասն մ'ենք, կոտորակ մը միայն բոլոր իտալական մեծ հայրենեաց ։ Ամեն խորին և աշխատեալ կարգ կը սկսի, տեարք իմ, պզտիկ և բնական աղնուապետութիւններէ, և արդէն դուք ասոնցմէ մէկը կը կազմէք, որ օրինակ պիտորըլայ և պտղաբեր քիչ ժամանակուան մէջ. կրթել և վարժեցնել հասարակ մարդը, միշտ իր համեստ վիճակին մէջ պահելով, և չբաժնելով զինքը ամենին իր անդադարելի բազկաց աշխատութենէն ։

Ոգեւորուինք ուրեմն, և մտնենք մեր բաղդէն մեզի նշանակուած ճամբուն մէջ, առանց շատ այլալեւու բարոյական զգացմունքէ՝ որ մեր չորս կողմը կամ հեռի մեզմէ կը տկարանան և իրար կ'անցնին ։ Շնորհիւ Աստուծոյ, դեռ իտալիա կատարեալ բարոյականութեան երկու չքնաղ օրինակ կը մատուցանէ մեզի, որոնց վրայ պէտք է միշտ աչքերնիս դարձնենք ։ Մէկն է, տեարք իմ, մեր բանակն, որ բոլոր Եւրոպոյ համար նմանելու օրինակ է կատարելութեան, քաջութեան, եղբայրութեան և անձնանուիրութեան, և որուն համար անկարելի է թէ ըլլայ պարադայ մը՝ յորում ինքն չըլլայ աշխատասէր, բոլորովին սիրտ և գթութիւն, ուր որ անակնունելի դժբաղդութիւն պատահելու ըլլայ, թէ առանձնականի մը և թէ հասարակաց ։

Միւս ուղղութեան և լաւութեան յաւերժական կանոնն, միւս զարմանալի օրինակն անտեղիտալի խառութեան 'ի կատարումն անձնական պարտուց, ունինք բարեբաղդաբար յիշխանս մեր, ունինք յերիտասարդ թագաւոր մեր և 'ի շնորհալի թագուհին